

Կողոսացիս 2:8-10 (Colossians 2:8-10)

«Միայն Յիսուսն է պետք է ընդունինք»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 03.14.99

Հարցումը այս է, «Միայն Յիսուսն է պետք է ընդունինք»: Շատեր կըսեն ո՛չ: Եւ կաւելցնեն ուրիշ բաներ մեր փրկութեան: Արդիօք ունի՞մք սիրելիներ որոնք այս համոզումը ունին:

Պողոս Առաքեալ կըսէ - Կողոսացիս 2:8էն-10ը «Զգուշացէ՛ք, չըլլայ թէ մէկը ձեզ գերի դարձնէ փիլիսոփայութիւնով ու փուն խաբէութիւնով, որ մարդոց աւանդութեան պէս է ու աշխարհի սկսումներուն պէս եւ ոչ թէ Քրիստոսին վարդապետութեանը պէս: Վասնզի մարմնապէս անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը: Եւ դուք ալ անով լեցուած էք, որ գլուխն է բոլոր իշխանութեան ու պետութեան»:

Կարգ մը Ամերիկացիներ երբ օտար երկիրներ կերդան յանկարծ վտանգի կը հանդիպին եւ կը կորսնցնեն իրենց ազատութիւնը: Պողոս Առաքեալ կըսէ թէ Քրիստոնեաները նոյն վտանգին են նթակայ են:

Այս աշխարհի փիլիսոփայութիւնը կը հրապուրէ մեզ եւ կը հերացնէ մեզ նշմարտութենէն: Այս վարդապետութիւնը փուն է կը խոստանայ իմաստութիւն եւ գիտութիւն - կը ցուցնէ թէ մարդը աւելի լաւ կը հասկնայ զԱստուած եւ չ'նդունիր Աստուծոյ յայտնութիւնը իր մասին - ասոնք հիմնուած են Սատանայի վրայ եւ կուրանան թէ Յիսուս Աստուած է եւ թէ Փրկիչ է:

Պողոս Առաքեալ շատ յստակ կերպով կը ցուցնէ թէ մենք միայն Յիսուսը պէտք ունինք: 9երորդ եւ 10երորդ համարներուն մէջ կը տեսնենք թէ իր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը: Երբ Յիսուս կընդունինք որպէս մեր Փրկիչը մենք ալ անով կը լեցուինք - որ գլուխն է բոլոր իշխանութեան ու պետութեան:

11երորդ համար էն մինչեւ 15երորդ համարը Պողոս Առաքելը կը բացատրէ թէ ինչ է այս լեցունութիւնը: Երբ Յիսուս ընդունինք որպէս Փրկիչ մեր մեղքերը կը ներուին եւ նոր կեանք կը ստանանք: Մեղքի յանձանքէն կ'ազատինք: Արդէն, Աստուած խաչով մեզ ներած է: Պէտք չունինք Սատանայէն վախնալ: Յիսուս խաչին վրայ գամեց իշխանութիւնները ու պետութիւնները եւ յաղթեց բոլոր աշխարհի վարդապետութիւնները:

Որգան մեծ շնորհիք արժանի եղած ենք որ կոչուած ենք Աստուծոյ գաւակներ: Ուրեմն քաջասիրտ ըլլանք, հաւատքի վրայ հաստատ կենանք մեր աչքերը միշտ Յիսուսի նային:

Եթէ տակաւին չես նանչնար Յիսուս որպէս Փրկիչդ, ահա քեզի հրաւեր այս առաւօտ: Ընդունէ զինք եւ ըսէ *«ներէ մեղքերս եւ եղիր Փրկիչս»*: